

ՀԱՅՆԱԳՐԵԱԼ

ԵՐԳԵՅՈՂՈՒԹԻՒՆՔ

ՍՐԻՈՅ ՊԱՏԱՐԱԳԻ



ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՅՈՑ

1105—1173



«Տպարան ՆՈՒԱԳ»

ՊԵՂՈՒՄ

1938

ՀԱՆԳԱՆԱԿ ՆԻԿԻԱԿԱՆ

Հաւատամք ի մի Աստուած, ի Հայրն ամենակալ, յԱրարիչն երկնի և երկրի՝ երևելեաց և աներևութից:

Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս յՈրդին Աստուծոյ, ծնեալն յԱստուծոյ Հօրէ Միածին, այսինքն յէութենէ Հօր:

Աստուած յԱստուծոյ լոյս ի լուսոյ, Աստուած ճշմարիտ. յԱստուծոյ ճշմարտէ ծնունդ և ոչ արարած:

Նոյն ինքն ի բնութենէ Հօր՝ որով ամենայն ինչ եղև յերկինս և ի վերայ երկրի, երևելիք և աներևոյթք:

Որ յաղագս մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան՝ իջեալ յերկնից՝ մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կառարելապէս ի Մարիամայ սրբոյ կուսէն՝ Հոգւովն Սրբով:

Որով էառ մարմին, հոգի և միտ, և զամենայն որ ինչ է ի մարդ, ճշմարտապէս և բոլորով:

Չարչարեալ, խաչեալ, թաղեալ յերրորդ աւուր յարուցեալ, ելեալ ի յերկինս նովին մարմնովն՝ նստաւ ընդ աջմէ Հօր:

Գալոց է նովին մարմնովն և փառօք Հօր, ի դատել զկենդանիս և զմեռեալս:

Որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան:

Հաւատամք և ի Սուրբ Հոգին՝ յանեղն և ի կատարեալն:

Որ խօսեցաւ յօրէնս և ի Մարգարէս և յԱւետարանս:

Որ էջն ի Յորդանան, քարոզեաց զԱռաքելաւսն և բնակեցաւ ի սուրբսն:

Հաւատամք և ի մի միայն Ընդհանրական և Առաքելական Սուրբ եկեղեցի:

Ի մի Մկրտութիւն, յԱպաշխարութիւն, ի Քաւութիւն և ի Թողութիւն մեղաց:

Ի Յարութիւն մեռելոց, ի Դատաստանն յաւիտենից. Հոգւոց և մարմնոց յԱրքայութիւն երկնից, և ի կեանսն յաւիտենականս:

(Յամի Տեառն 326)

2001

**ԱՂՁԹՔԻ ԻՐԱՔԱՆՁԻՐ ԱՆՁԻՆ
ՀԱՒԱՏԱՑԵԼՈՅ Ի ՔՐԻՍՏՈՍ
ՁՈՐ ԱՐԱՐԵԱԼ Է Ի ՍՐԲՈՅ ՏԵԱՌՆ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻՈՅ**

Ա

Հաւատով խոստովանիմ, և երկիրպագանեմ Քեզ, Հայր և Որդի և Սուրբ Հոգի, անեղ և անմահ բնութիւն, արարիչ հրեշտակաց և մարդկան և ամենայն եղեւոյ, և ողորմեա քո արարածոց և ինձ բազմամեղիս:

Բ

Հաւատով խոստովանիմ, և երկիրպագանեմ քեզ, անբաժանելի լոյս, միասնական Սուրբ Երրորդութիւն, և մի Աստուածութիւն. արարիչ լուսոյ և հալածիչ խաւարի, հալածեա ի հոգւոյ իմմէ՝ զխաւար մեղաց և անգիտութեան և լուսաւորեա զմիտս իմ ի ժամուս յայսմիկ աղօթել քեզ ի հաճոյս և ընդունիլ ի քէն զխնդրուածս իմ, և ողորմեա քո արարածոց և ինձ բազմամեղիս:

Գ

Հայր երկնաւոր Աստուած ճշմարիտ. որ առաքեցեր զՈրդիդ քո սիրելի ի խնդիր մոլորեալ ոչխարին, մեղայ յերկինս և առաջի քո. ընկալ զիս որպէս զանառակ որդին, և զգեցո ինձ զպատմութեան զառաջինն, զոր մերկացայ մեղօք և ողորմեա քո արարածոց և ինձ բազմամեղիս:

Դ

Որդի Աստուծոյ, Աստուած ճշմարիտ, որ խոնարհեցար ի հայրական ծոցոյ, և առեր մարմին ի Սրբոյ Կուսէն Մարիամայ, վասն մերոյ փրկութեան, խաչեցար, թաղեցար, և յարեար ի մեռելոց, և համբարձար փառօք առ Հայր. մեղայ յերկինս և առաջի քո. յիշեա զիս որպէս զաւազակն՝ յորժամ զաս արքայութեամբ քով, և ողորմեա քո արարածոց և ինձ բազմամեղիս:

Ե

Հոգի Աստուծոյ, Աստուած ճշմարիտ որ իջեր ի Յորդանան և ի վերնատունն և լուսաւորեցեր զիս մկրտութեամբ սուրբ Աւագանին. մեղայ յերկինս և առաջի քո. մաքրեա զիս վերստին Աստուածային հրով քով՝ որպէս հրեղէն լեզուօք սուրբ զառաքեալսն և ողորմեա քո արարածոց և ինձ բազմամեղիս:

Զ

Ամենախնամ Տէր, զիս պահապան աչաց իմոց զերկիրդ քո սուրբ՝ ոչ եւս հայիլ յարատ. եւ ականջաց իմոց ոչ ախորժել լսել զբանս չարութեան. և բերանոյ իմոյ՝ ոչ խօսիլ զստութիւն, և սրտի իմոյ՝ ոչ խորհիլ զչարութիւն, և ձեռաց իմոց՝ ոչ զործել զանիրաւութիւն և ոտից իմոց՝ ոչ գնալ ի ճանապարհս անօրէնութեան. այլ ուղղեա զչարժումն սոցա լինիլ միշտ ըստ պատուիրանաց քոց յամենայնի. և ողորմեա քո արարածոց և ինձ բազմամեղիս:

Է

Հուր կենդանի Քրիստոս, զհուր սիրոյ քո զոր արկեր յերկիր, բորբոքեա յանձն իմ, զի այրեայէ զախտ հոգւոյ իմոյ, և սրբեացէ զխիղճ մտաց իմոյ, և մաքրեացէ զմեղս մարմնոյ իմոյ, և վարեացէ զլոյս գիտութեան քոյ ի սրտի իմում և ողորմեա քո արարածոց և ինձ բազմամեղիս:

Ը

Արքայ երկնաւոր, աուր ինձ զարքայութիւն քո, զոր խոստացար սիրելեաց քոց. և զօրացո զսիրտ իմ առել զմեղս. և սիրել քեզ միայն, և առնել զկամս քո. և ողորմեա քո արարածոց և ինձ բազմամեղիս:

Թ

Խնամող արարածոց, պահեա նշանաւ խաչի քո՝ զհոգի և զմարմին իմ ի պատրանաց մեղաց, ի փորձութեանց զիւաց. և ի մարդոց անիրաւաց, և յամենայն վտանգից հոգւոյ և մարմնոյ, և ողորմեա քո արարածոց և ինձ բազմամեղիս:

Ժ

Պահապան ամենայնի Քրիստոս, աջ քո հովանի լիցի ի վերայ իմ, ի տուէ և ի գիշերի, ի նստիլ ի տան և ի գնալ ի ճանապարհ, ի ննջել և ի յառնել, զի մի երբէք սասանեցայց, և ողորմեա քո արարածոց և ինձ բազմամեղիս:

ԺԱ

Աստուած իմ, որ բանաս զձեռն քո և լնուս զամենայն արարածս ողորմութեամբ քով. քեզ յանձն առնեմ զանձն իմ, զու հոգա և պատրաստեա զպէտս հոգւոյ և մարմնոյ իմոյ, յայսմհետէ մինչև յաւիտեան:

ԺԲ

Քեզ փառք և երկրպագութիւն անբաժանելի Սուրբ Երրորդութեանդ յաւիտեանս յաւիտեանից: Ամէն:



731 ահ 20 13

37528-67

(464-Ա.Է.)
Գ-

ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾ

Մ. ԵԿՄԱԼԵԱՆ

Moderato. *pp*

Սուրբ Աստուած սուրբ եւ հը զօր սուրբ եւ ան — մահ, որ ծը նար

f

եւ յայտնեցար, ո — զորմեա մեզ, Սուրբ Աստուած սուրբ եւ հը —

f

զօր սուրբ եւ ան մահ, որ ծընար եւ յայտնեցար ո — զորմեա մեզ:

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՀԱՆԳԱՆԱԿ

Կը հաւատամ ամենակալ Հօր Աստուծոյ, երկնի և երկրի Ստեղծողին, և անոր Միածին Որդւոյն, մեր Տէրոջը Յիսուսի Քրիստոսի, որ յղացաւ Սուրբ Հոգիէն, ծնաւ Մարիամ կոյսէն, չարչարուեցաւ Պոնտացի Պիղատոսի օրով, խաչուեցաւ, մեռաւ և թաղուեցաւ, և երրորդ օրը յարեալ մեռեալներէն, երկինք համբարձաւ և ամենակալ Հօր Աստուծոյ աջ կողմը նստաւ. անտի պիտի գայ դատել կենդանիները և մեռեալները: Կը հաւատամ Սուրբ Հոգւոյն, կաթողիկէ սուրբ և կեղեցւոյն, սուրբերու հաղորդութեան, մեղաց թողութեան, մարմնոյ յարութեան և յաւիտենական կենաց: Ամէն:

(Բ Դար)

ԾՆՆԴԵԱՆ

Սուրբ Աստուած սուրբ եւ հըզօր սուրբ և անմահ,
որ ծընար եւ յայտնեցար, ողորմեա մեզ:

ԽԱՉԻ

Սուրբ Աստուած սուրբ և հըզօր, սուրբ և անմահ,
որ խաչեցար վասն մեր, ողորմեա մեզ:

ՁԱՏԿԻ

Սուրբ Աստուած սուրբ և հըզօր, սուրբ և անմահ,
որ յարեար ի մեռելոց ողորմեա մեզ:


ՀԱՄԲԱՐԺԱՆ

Սուրբ Աստուած սուրբ և հըզօր, սուրբ և անմահ,
որ համբարձար փառօք առ հայր ողորմեա մեզ:




ՔՐԻՍՏՈՍ Ի ՄԷՉ

Moderato.



Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ Որ էնն Աստուած աստ բազմեցաւ.
Ե — կե — ղեցիս մի անձն ե — ղե համ բոյ ըրս յօդ լըրման տըւաւ.



Խաղաղութեան ձայն հըն չե ցաւ սուրբ ողջունի հրա ման տըւաւ.
Թըշնամութիւնըն հե — ու ցաւ սէրն յընդհա — նաւըս սըփ ու ցաւ.



Արդ պաշտօնեայք բարձեալ ըզ ձայն տուք օրհնութիւնն ի մի բերան



Մի աս նախան աստուածութեանն, ո ըում սրովբեքն են սըրբա — բան:

Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ
Որ էնն Աստուած աստ բազմեցաւ.
Խաղաղութեան ձայն հընչեցաւ
Սուրբ ողջունի հրաման տըւաւ.
Եկեղեցիս մի անձն եղե
Համբոյրըս յօդ լըրման տըւաւ.
Թըշնամութիւնըն հեռացաւ
Սէրն յընդհանուրըս սըփոնեցաւ.
Արդ պաշտօնեայք բարձեալ ըզ ձայն
Տուք օրհնութիւնն ի մի բերան
Միասնական աստուածութեանն,
Որում սրովբեքն են սըրբաբան:



Andante.



ՓԱՌՔ ՔԵՉ ՏԷՐ

Փառք քեզ Տէր

ff



Աստ — ուա մե — ր:

p

ՅԱՄԵՆԱՅՆԻ

Andante.



Յա մե — նայ — նի օրհ — նալ ես տէր. Յրհ —



նեմք ըզ — քեզ գո զեմք ըզ — քեզ Գո հա նամք ըզ —



քէն, ա զա չեմք ըզ քեզ տէր. Աստ — ուած մե — — — — — ր:

Յամենայնի օրհնեալ ես Տէր,
Օրհնեմք ըզքեզ գովեմք ըզքեզ,
Գոհանամք ըզ քէն, աղաչեմք ըզ քեզ Տէր.
Աստուած մեր:

ՄԱՐՄԻՆ ՏԷՐՈՒՆԱԿԱՆ

Andante

pp

Մարմին տէրունական — կան եւ արին փրկչական — կան

fp

կայ ա — ռա — ջի. երկ նա յին զօրութիւնքն յաներեւոյթս

pp

եր զեն եւ ա — սեն անհանգիստ բարբառով.

pp

սուրբ սուրբ սուրբ, Տէր զօ — րութեանց:

Մարմին տէրունական

եւ արին փրկչական կայ առաջի.

երկնային զօրութիւնք յաներեւոյթս

երզեն եւ ասեն անհանգիստ բարբառով.

Սուրբ, սուրբ, սուրբ, տէր զօրութեանց:



ՀԱՅՐ ՄԵՐ

Andante

p

Հայր մեր — որ յերկինս ես, սուրբ ե — զի ցի

pp

ա նուն քո. ե — կես ցէ արքայութիւն քո ե զի ցին կամք

f

քո որպէս յերկինս եւ յերկրի. զհաց մեր հա նա պազորդ

p

սուր մեզ ա — յ — սօր. թող մեզ ըզպար — տիս մեր,

pp

որպէս եւ մենք թող զուրմերոց պարտապանաց. եւ մի տա նիր

f

զմեզ ի փորձութիւն. այլ փրկեա ի չա — — րէ:

Հայր մեր որ յերկինս ես,
Սուրբ եղիցի անուն քո.
Եկեսցէ արքայութիւն քո,
Եղիցին կամք քո որպէս յերկինս
եւ յերկրի.
Զհաց մեր հանապազորդ

Տուր մեզ այսօր.
Թող մեզ ըզպարտիս մեր,
Որպէս եւ մենք թող զուրմերոց
պարտապանաց.
Եւ մի տանիր զմեզ ի փորձութիւն.
Այլ փրկեա ի չարէ:

ՍՈՒՐԲ ՍՈՒՐԲ

Andante.
pp

Սու — — — — — րբ .

p *mf* *p*

Սու — — — րբ տէ — ր զօ — րու — թեանց ,

f *mf* *p*

Հի են եր — կինք և եր — կիր փա — ոօք քո ,

f *p*

Օրհնու — թիւն ի բար — ձունս . օրհ — — — — նեալ

p *pp* *p*

որ և — կիր եւ գա — լոցդ ևս անուամբ տեառն .

f

Ո — զ ս ա — — նա ի բա — ր ձու — նս :

Սուրբ .

Սուրբ տէր զօրութեանց

Հի են երկինք և երկիր փառօք քո ,

Օրհնութիւն ի բարձունս .

Օրհնեալ որ եկիր

եւ գալոցդ ևս անուամբ տեառն

Ովսանա ի բարձունս :

ԱՄԷՆ ԵՂԻՑԻ

Moderato.

Ա — մէ — ն : Ե զի — ցի ա — նուն տեառն օրհնեալ յայսրմ

հե տէ մինչև յա — լիտ — եան : Ե — զի — ցի ա նուն

տեառն օրհնեալ յայ սրմ հե տէ մինչև յա — լիտ — եան : Եւ ե — զի —

poco a poco Rit

ցի անուն տեառն օրհնեալ յայ սրմ հե տէ մինչև յա — լիտ եան :

Ամէն , եղիցի անուն տեառն օրհնեալ ,
Յայսրմ հետէ մինչև յաւիտեան .

Եղիցի անուն տեառն օրհնեալ
Յայսրմ հետէ մինչև յաւիտեան .

Եւ եղիցի անուն տեառն օրհնեալ
Յայսրմ հետէ մինչև յաւիտեան :



ՕՐՀՆԵՑԻՑ ԲԶՏԷՐ

Դաշնաւորից
Յ. ԻԿԵԶԵԱՆ.

Andante.

Օրհնեցից ԲԶՏԷՐ, յա - մե - նայն ժամ, յա մե - նայն ժամ.

p *f*

Օրհնեցից ԲԶՏԷՐ, յա - մե նայն ժամ, յա մե - նայն ժամ.

p *f*

Օրհնութիւն նո - րա, Ի րե - րան իմ, Ա. — մէն:

f *p* *f*

Օրհնութիւն նո - րա, Ի րե - րան իմ, Ա. — մէն:

f *p* *f*

Օրհնեցից ԲԶՏԷՐ
Յամենայն ժամ
Օրհնութիւն նորա
Ի րեւան իմ, Ամէն:

ԱՄԷՆ ՀԱՅՐ ՍՈՒՐԲ

Դաշնաւորից՝ Յ. ԻԿԵԶԵԱՆ

Moderato

p *f*

1 Ա. — մէ — — — ն Հա — — — յը
2 Ո — — — — — ր ղի — — — — —
3 Հո — — — — — զի — — — — — ր

p *f*

սու — — — — — րբ: Օրհնութիւն հօր եւ որդւոյ

f *f*

եւ Սրբոյ Հոգւոյն, Այժմ եւ միշտ եւ յա — լիտ — եանս

յա լի տե նից, ա — մէն:

Ամէն Հայր սուրբ, Որդիդ սուրբ,
Հոգիդ սուրբ: Օրհնութիւն հօր եւ
Որդւոյ եւ Սրբոյ Հոգւոյն, այժմ եւ միշտ
եւ յաւիտեանս յաւիտենից ամէն:

ԱՌԱԽՈՏ ԼՈՒՍՈՅ

Moderato

Գաղափարեց՝ Յ. Իսկանյան

Ս. ուա ԼՈՍՈ լուսոյ, Ս. րե գակն ար — դար,

Ս. . . . ուա ԼՈՍՈ լուսոյ, Ս. րե գակն ար — դար,

Սո իս լոյս ծագ — եա: Բղխումն ի Հօ — րէ,

Բղխ եա՛ ի հոգ — ւոյս Բան քե — գ ի հա — ճոյս:

Ս ուա ԼՈՍՈ լուսոյ,
րեգակն արդար,
ո իս լոյս ծագեա:

Ք անծղ ողորմութեան
անծիղ ծածկելոյ
ըտող զիս արա:

Բ ղխում ի հօրէ,
ղխեա՛ ի հոգւոյս
ան քեզ ի հաճոյս:

Պ ուն ողորմութեան,
աւանդոյի բա՛ց,
ասեցո՛ վերնոցն:

Ե րրեակ միութիւն,
ղելոց խնամող,
ւ ինծ ողորմեա:

Է դ հայր անբակիզբն,
ակից Որդի,
միշտ Սուրբ Հոգի:

Ք ագաւոր փառաց,
ողորթեանց տուող
ող ինծ ըզյանցանս:

Չ արթիր, Տէր, յօգնել:
արթո ըզթմբեալս,
ուարթնոց նմանել:

Ը նկալ զիս գթած,
նկալ ողորմած,
նկալ մարդասէր:

Թ ողովող բարեաց,
ողովեա եւ զիս
ողովս անդրանկաց:

ՏԷՐ ՈՂՈՐՄԵԱ

Andante

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ

Տէ՛ր ո — ղոր — մեա, Տէ՛ր ո — ղոր — մեա,

Տէ՛ր ո — ղոր — մեա, Տէ՛ր ո — ղոր — մեա:

2 Ամենասուրբ երրորդութիւն
Տուր աշխարհիս խաղաղութիւն:

3 Տէ՛ր ողորմեա, Տէ՛ր ողորմեա,
Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

ՍԻՒՐԻՈՅ ԵՒ ԼԻԲԱՆԱՆԻ
ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ
ՀԱՒԱՏՈՅ ՀԱՆԳԱՆԱԿԸ

ԿԸ ՀԱՒԱՏԱՄ

1. Կը հաւատամ երկնից ու երկրի Արարչին,
Ամենակարող մէկ Աստուծոյ — Հօրը, Որդւոյն և Սուրբ
Հոգւոյն:

2. Կը հաւատամ թէ՛ մարդ Աստուծոյ պատկերովը
ստեղծուած բայց մեղքի մէջ ինկած է, և միայն Աս-
տուծոյ շնորհքովը կրնայ ազատիլ մեղքի իշխանու-
թեանէն և արժանանալ Աստուծոյ հաճութեան:

3. Կը հաւատամ թէ՛ մեր Տէրը Յիսուս Քրիստոս
մարմնացաւ և իր կեանքովը ու վարդապետութիւնովը,
չարչարանքովը ու մահուամբը մարդկային սեռին համար
կատարեալ փրկութիւն մը պատրաստեց: Կը հաւատամ
թէ մեռելներէն յարութիւն առնելով Հօրը աջ կողմը
մեզի համար կը բարեխօսէ, և Անոր անուան ամէն
հաւատացող ձրիաբար մեղաց թողութիւն ու յաւիտե-
հական կեանք կ'ստանայ:

4. Կը հաւատամ թէ Սուրբ Հոգին մարդոց
սրտերուն մէջ գործելով զանոնք կը համոզէ մեղքի,
արդարութեան և դատաստանի մասին, թէ անոր միջո-
ցաւ նոր և սուրբ բնակութեան մը կը տիրանանք:

5. Կը հաւատամ թէ մեր Տէրը Յիսուս Քրիստոս
ունի երկրի վրայ տեսանելի եկեղեցի մը, որուն խոր-
հուրդներն են Մկրտութիւն և Հաղորդութիւն: Կը
հաւատամ թէ Սուրբ Գիրքը Աստուծոյ ներշնչութեամբ
գրուած է, և կը բաղկանայ Հին ու Նոր Կտակարաններէ.
և թէ ասիկա է կանոնը եկեղեցւոյ հաւատքին ու
գործերուն:

6. Կը հաւատամ մեր Տէրոջը փառքով զալստեան,
մեռելոց յարութեան, մեղաւորներուն յաւիտենական դա-
տապարտութեան և արդարներուն յաւիտենական կենաց:



ՀՀ Ազգային գրադարան



NL0684262

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նիկիական Հանգանակ
Ներսէս Շնորհալիի Աղօթքը
Առաքելական Հանգանակ

Ամէն հայր Սուրբ	Էջ	9
Առաւօտ լուսոյ	»	10
Եղիցի	»	7
Հայր մեր	»	5
Մարմին տէրունական	»	4
Յամենայնի	»	3
Սուրբ Սուրբ	»	6
Սուրբ Աստուած	»	1
Տէր ողորմեայ	»	11
Փառք քեզ Տէր	»	3
Քրիստոս ի մէջ	»	2
Օրհնեցից զՏէր	»	8
Հայ Աւետ. Հանգանակ	»	12



Ստանալու համար դիմել՝

Պէյրուքի Հայ Աւես. Ա. Եկեղեցւոյ Երգարանի Հրատարակչական Ֆանձնախումբին:

ԳԻՆ 5 ՅՐԱՆՔ

[Handwritten signature]

731
Հարա
783
2-22